

# ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԵՐԻ ԵՐԵՍՆԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆՇՈՒՄԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ

Լրացավ Արարատյան հայրապետական թեմի չորս ավագ քահանաների՝ Տ. Արամ քահանա Բոյաջյանի, Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյանի, Տ. Հովհաննես քահանա Մարուքյանի և Տ. Կարապետ քահանա Հովնանյանի քահանայական ձեռնադրության 30 տարին: Այս առիթով թեմիս առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանի միջնորդությամբ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը օրհնության գիր ընծայեց՝ ի գնահատություն նրանց երկարամյա անխոնջ և նվիրյալ ծառայության: Պատարագի ընթացքին վերոհիշյալ օրհնության գիրը ընթերցվեց ի լուր ժողովրդին հոբելյար քահանաների պաշտոնավարած եկեղեցիներում, որտեղ գնահատանքի խոսքով հանդես եկավ Գարեգին եպիսկոպոսը: Սրբազան հայրը, անդրադառնալով նրանց կենսագրությանը, ընդգծեց նրանց եռանդուն և եկեղեցանվեր գործունեությունը թեմի աշխատանքներում:

Այնուհետև սրբազան հոր առաջնորդությամբ քահանա հայրերը այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ ստանալու Վեհափառ Հայրապետի հայրական օրհնություններն ու հորդորները: Գարեգին եպիսկոպոսը, հայտնելով իր երախտագիտությունը Վեհափառ Հայրապետին ընձեռած ընդունելության և հայրական վերաբերմունքի համար, կրկին անգամ հոբելյարներին ուղղեց շնորհավորանքի խոսքեր: Ի դեմս հոբելյար հոգևոր իր եղբայրների Տ. Ռուբեն ավագ քահանա Մարտիրոսյանը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին և առաջնորդական փոխանորդին՝ կյանքի նվիրական այս պահին իրենց նկատմամբ դրսևորած հայրական վերաբերմունքի, ուշադրության և հոգատարության համար:

Վերջում Վեհափառ Հայրապետը կրկին շնորհավորեց քահանա հայրերին՝ շեշտելով քահանայի ծառայության կարևորությունը Հայ Եկեղեցու ապագանվեր գործունեության ասպարեզում:

Քահանաների 30-ամյա հոբելյանը խանդավառությամբ նշվեց նաև Արարատյան հայրապետական թեմում:

Այս առթիվ հոգևոր դասի և պաշտոնեության կողմից կազմակերպվեց ուխտագնացություն դեպի Սուրբ Գեղարդա վանք: Կեսօրին վանքի ուխտավորների սեղանատանը տրվեց պաշտոնական ճեշկերույթ ի պատիվ հոբելյար քահանաների: Դրվատանքի խոսքեր ուղղելով չորս քահանա հայրերին, Գարեգին եպիսկոպոսը անդրադարձավ յուրաքանչյուրի անձին և նրա ծառայությանը թեմում, ինչպես նաև հոգևոր դասի դերին պատմության ընթացքում և մեր օրերին: Ի թիվս շնորհավորողների հանդես եկավ նաև Սուրբ Գեղարդա վանքի վանահայր Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանը:

Վերջում իրենց շնորհակալություններն ու երախտագիտությունը հայտնեցին հոբելյար քահանաները: Իր խոսքի մեջ Տ. Արամ ավագ. քահանա Բոյաջյանը նախ իր շնորհակալությունները հայտնեց Վեհափառ Հայրապետին և առաջնորդական փոխանորդին՝ իրենց նկատմամբ դրսևորած հայրական վերաբերմունքի համար, ապա իր խոսքն ուղղելով քահանա եղբայրներին՝ ասաց. «Մենք բոլորս մի ոսկե շղթայի ամրապես միմյանց ընդելուզված օղակներն ենք: Ինչպես մենք՝ ավագ սերնդի ներկայացուցիչներս, մեր նախորդների համար եղանք այդ շղթայի շարունակող օղակները, հիմա դուք, սիրելի երիտասարդ քահանա եղբայրներ, գալիս եք

Քահանա հայրերը առաջնորդական փոխանորդ սրբազան հոր հետ Երևանի Ս. Սարգիս եկեղեցու մուտքի առջև

շարունակելու այդ վսեմ գործը, որն առհավատչյան է մեր առաքելության հավիտենականության:

Մենք մեր երիտասարդությունն ենք տեսնում ձեր մեջ և ձեզանով նոր լիցք ու եռանդ ենք ստանում՝ նորովի շարունակելու անսակարկ նվիրաբերումը մայր հայրենիքին և մեր Սուրբ Եկեղեցուն՝ հանուն ողջ աշխարհի խաղաղության պահպանման, մարդկության եղբայրության և մերալն ժողովրդի գոյատևման ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի»:

Այնուհետև իր շնորհակալական խոսքով հանդես եկավ Տ. Ռուբեն ավագ քհն. Մարտիրոսյանը:

«Ես շատ շնորհակալ եմ և երախտապարտ, այնքան հաճելի խոսքերի և պատվի համար, որին արժանացրեցիք ինձ և իմ եղբայրներին, որոնց քահանայագործության 30 տարին լրացավ:

Ես հուզված եմ և մի փոքր տխուր, երբ հետադարձ հայացք եմ ձգում իմ անցած գործունեության 30 տարիների վրա: Տխուր՝ որովհետև այդ տարիները կյանքիցս են պոկվել, բայց և հուսադրիչ՝ քանի որ, սիրելիներ, այդ տարիներին ջանադրաբար և տքնությամբ աշխատել եմ մոմի չափ լույս տալ մայր եկեղեցուն: Լուսատու, շողշողուն աստղ լինել՝ մեր ուժերից վեր է և անհնարին, բայց մոմի լույսը քիչ չէ, երբ անծայր խավարը երբեմն-երբեմն լուսավորվում է մոմի լույսով, մենք դադարում ենք խարխափելուց և ճամփա ենք գտնում:

Իմ մեջ, որպես հայ կրոնավորի, հավասարաչափ նստած է եկեղեցասիրությունը և ազգայինը, փորձեցեք հանել իմ միջից ազգայինը՝ ես փուլ կգամ. ինչպես ավերակ, կամ հանեցեք եկեղեցին՝ նմանապես կտապալվեմ. այս երկուսի միաձույլ առկայությունը ինձ ոգի է ներշնչել 30 ձիգ տարիների ընթացքում: Ես շատ ուրախ ու նույնիսկ երջանիկ եմ զգում ինձ, որ այսօր տեսնում եմ առողջ և հուսադրիչ հոգևոր սերունդ, որ սեղանակից է մեզ, որ գալիս է հաջորդելու մեզ: Սերունդների փոխանակության ժամանակ օրինաչափ կերպով առաջնությունը տրվում է եկող սերնդին, նրանն է նախաձեռնությունը, համարձակությունը, նորի և առաջավորի զգացողությունը, որը սակայն փորձառության պակաս ունի (կյանքի և աշխատանքի), ահա այստեղ է, որ նա պիտի դիմի և օգտվի ավագ սերնդի կյանքի և գործելակերպի փորձառությունից, որով և ստեղծվում է գործակցություն և բարի համատեղություն հնի և նորի»:

Շնորհակալական խոսքով հանդես եկավ նաև Տ. Հովհաննես ավագ քահանա Մարությանը. «Սև մակերով երիտասարդ էի, երբ ուխտեցի ծառայել մեր Եկեղեցուն: 24 տարի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի կամարների տակ՝ մանկավարժական գործունեության ընթացքում, և 6 տարուց ավելի Երևանի Ս. Սարգիս եկեղեցու կամարների տակ՝ քահանայության ծառայության մեջ, մակերս սպիտակել են:

Ինձ համար երջանկություն է Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերջ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանի և թեմիս քահանայական դասի հետ Ս. Գեղարդա վանքի այս սուրբ և նվիրական ուխտավորաց սեղանատան մեջ նշել մեր չորս քահանաներիս աշխատանքի երեսնամյա շրջանը:

Քահանայի նման ամյակի հանդիսավոր գնահատումը, սիրո եղբայրական սեղանի շուրջ, առաջին անգամ է կազմակերպվում մեր առաջնորդական փոխանորդ սրբազան հոր կողմից: Սրբազանի միջնորդությամբ արդեն ստացել ենք Վեհափառ Հայրապետի օրհնության գրերը, որոնք ընթերցվեցին մեր ծառայած եկեղեցիների բեմերից:

Այս բոլոր միջոցառումները մեզ մխիթարում, գոտեպնդում են հետագայում ավելի եռանդով աշխատելու համար: Մեր Եկեղեցին իսկապես կարիք ունի հավատավոր քահանայից դասի ծառայության: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Ամենայն Հայոց Հայրապետության սիրտն է, իսկ քահանայից դասը՝ այդ կենդանի մարմնի արյունատար երակները: Անհրաժեշտ է այդ սիրտն ու երակները առողջ վիճակի մեջ պահել՝ հանուն մեր Եկեղեցու հարատևման ու պայծառացման:

Խոսքս ուղղում եմ ձեզ, սիրելի երիտասարդ քահանա եղբայրներ, մեր՝ ավագ սերնդի կյանքի արևը դեպի մայրամուտն է թեքվել, իսկ ձերը դեռ նոր՝ լուսաբացին սարերի կատարներից շրայլորեն իր շողքն է սփռելու: Ձեր գործերով, կյանքի օրինակով արժանի եղեք մեր Եկեղեցու ուխտյալ կավակները դառնալու: Պատրաստ եղեք մեր ձեռքերից վերցնելու Գրիգոր Լուսավորչի օրերից մեզ փոխանցված Հայաստանյայց Եկեղեցու ջահը: Աշխատեցեք Հայաստանյայց Եկեղեցու կանթեղը միշտ վառ պահել՝ հետագա սերունդներին փոխանցելու համար:

Թող միշտ անշարժ մնա Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց Հայրապետությունը և Հայաստանյայց Եկեղեցու հոգևոր դասը»:

Պաշտոնական ճաշկերույթից հետո հոգևոր դասը, առաջնորդական փոխանորդի և վանահոր մասնակցությամբ, Սուրբ Գեղարդա վանքում հանդիսավորապես կատարեց երեկոյան ժամերգություն, միասնական աղոթք առաքելով առ ամենաբարձրյալն Աստված վասն աշխարհի խաղաղության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության:

Օրվա գեղեցիկ և տպավորիչ զգացումներով, վերանորոգված ուխտով, Արարատյան թեմի հոգևորականությունը վերադարձավ Երևան:

ՆՈՐԱՅՐ ՔԱՀԱՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ